եթէ ինքն անհիմն լուրերու զականելով, երբեմն դպրոցիս մահ երազելով, երբեմն անյաջողութիւն և Հոգաբարձական դրութեան վերայ կարծես հիւանդութիւն երևակայելով. որ բոլորովին սուտ է, կ'փութայ խրատուց դարմաններ մատուցանել, զորս Հոգաբարձութիւնս ոչ թէ միայն իրանից, այլև ամենայն Հայ անհատէն ուրախութեամբ կ'ընդունի և շնորհակալութիւն ընդ այնր կ'փոխարինէ, եթէ նկատէ նորա մէջ բարեմտութիւն և ճշմարտութիւն. ապա ուրեմն թող բարեհաճի նաև ընդունել Հոգաբարձութիւնս իւր վերայ անկեղծ կարեկցութիւնը և խրատական դարմանները իւր ճշմարիտ բարոյական հիւանդութեան վերայ, որով ամեն ժամանակ կախտանայ, երբեմն ծանր և երբեմն թեթև, և իւր հասարակաց լրագրական պարտքը մոռանալով շատ անգամ կարծես շողքորթութեան իբրև մեր հին Հայ նախարարական ցեղերու պատմագրաց երևոյթ կ'ստանայ, սակայն երանի թէ նոցա ճշմարտութեան նա և, բայց չ'է, այս կենդանարար շաւղէն կ'խոտորի իւր դատողութեանց մէջ կ'սայթաքի, ապա թ'է ոչ, ի՞նչ կ'նշանակէ ասել. ‹‹ Թէև մենք այս լուրերին հաւատ չ'ենք ընծայում կատարելապէս, բայց և այնպէս յայտնի է որ, այս լուրերը ունին հիմն,, ‚ Զարմանալի հակասական ձեռնարկութիւն, վասնզի եթէ ունին հիմն, ուրեմն պէտք է հաւատ ընծայել կատարելապէս. իսկ եթէ ոչ, պէտք չ'է հաւատալ, և անհիմն լուրերու հաւատալը և նոցա վերայ խօսելը կամ մնոտի տղայամտութիւն է, որոյ վերայ Հոգաբարձութիւնս իբրաւամբ կ'ծիծաղի, և կամ թէ մի առանձին անյայտ նպատակ, որով Հոգաբարձութեանս առաջ ինչպէս որ պարոնի ստութիւնը արհամարհելի, նոյնպէս և ցաւակցութիւնը բոլորովին կասկածելի համարուեցաւ և պիտի համարուի. Պէտք է յիշել նա և որ մարդս, որ և իցէ բանի վերայ այն ժամանակ կարող է դատողութիւն անել, երբ որ ի ձեռն լրոց նոյն իրի հանգամանաց վերայ խկութեամբ վերահասու եղած գտնուի, և կամ անձամբ ականատես լինի. Իսկ արդ Պ. Սիմէօնեանցն ոչ անձամբ տեսած է, և ոչ լուրերու կ'հաւատայ, ուրեմն ո՞ւստի գիտէ դպրոցիս հանգամանքը. ո՞ր գաղտնեաց աստուածուհին իրեն կ'թելադրէ. Այս տեղից պարզապէս կ'երևի որ. Պարոնը քաջ կ'զգայ իւր թղթակցի ստութիւնը, բայց իւր ցանկութեան դէմ կ'համարի, որ այդ լուրը սուտ լինի, այն պատճառաւ նախ կժխտէ, բայց վերջ զղջալով անհիմն կերպով կ'հաստատէ. ի՞նչ խորհրդաւոր հնարագիտութիւն.

Ի Վերջոյ Հոգաբարձութիւնս ինքն զինքն իւր պաշտօնատարութեան մէջ ճշմարտութեամբ անբասիր գտնելով և դպրոցս ըստ ամենայնի իւր դրութեան և նպատակին համեմատ բարեկարգութեան մէջ տեսնելով՝ կ'կրկնէ Շնորհալւոյն բարեհամբոյր խօսքը, որ առ ժպիրհ ոմն ‹‹ ծանիր և զայս, զի զիս թէև ամենայն լեզուք գովեսցեն յայն բարի, որ ոչ է առ իս, հողմոց հնչմունք վարկանիմ. և եթէ պարսաւէ ոք, և դատի յայն ինչ, որ ի մտացս խղճէ ոչ դատիմ, ոչ փոյթ ինչ առնեմ,, ‚

Խմբագրութենէդ կ'խնդրէ Հոգաբարձութիւնս իւր այս արդարացի ձայնը բոլոր Հայ հասարակութեան հաղորդել ազգաշահ լրագրոյդ միջոցաւ ի լոյս ճշմարտութեան.

Հոգաբարձութեան Ատեն. — Հոգ.
Տէր. Հայ. Պետրոսեան,
Յակոբ Մելքոն Շահնազարեան
Օհաննէս Աղամալեան
Գէորգ Պօղոսեան
Ատենադպիր Մ. Հայկ
Ջալալեան

Ի 21 Մայիսի 1871 ամի
Ի Բ. Տաշէ.

ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑ ՀԱՅՈՑ

ՆՈՐԳԱՅ

Խօսակցութիւն Արարատ ամսագրոյ.

Անցեալներումը կարդացինք մի ուրախաշարժ յօդուած, Արարատ պատուական ամսագրոյ Յունվար ամսի թերթերում՝ թիւ ինն (9)՝ երես 201, այն է Բաղաքամասին Նորգայ երկսեռ Դպրոցաց և բարեկրօն Պօղոս Աւագ քահանայի ուսումնարանաց հաստատութեանն սկզբնապատճառ լինելու, Պ. Վ. Բաղդասարեանցի գրուած,

թէև ուրախացայ որպէս Հայ, բայց միևնոյն ժամանակ, անհաւատալու կարծիքներ պատեցին սիրտս։

Պատճառ երևակայացրեցի իմ մէջ այդպիսի մի փոքր ժողովրդոց մէջ երկսեռի Դպրոց, և քահանայ ուսումնասիրութեամբ վառուած, կարելի՞ է արդեօք։ Վասն զի մեր արժանապատիւ քահանաներից մեծ մասը, միմիայն իրենց հարկաւոր անձնական օգտին համար են զբաղուած, և ոչ թէ Դպրոցներ հաստատելու ելն ելն։

Վերջապէս սրտիս կարծիքներ փարատելու և ստուգելու համար ամսոյս 19ին փութացայ ի քաղաքամասն Նորգ, այցելութիւն անելու Դպրոցներին։ Նախ գնացինք տղայոց Դպրոցը, ուր տեսանք, որ Հայոց լեզուի ուսուցիչ Պ. Բ. Տէր Յովհաննեսեանցը, դաս էր խօսում. նայելով ուշի ուշով Նորա դասախօսութեանն վերայ մի ժամուշափ պէտք է ասել ճշմարիտ հոգւով, որ պարոն վարժապետի Նոր գեղեցիկ ոճով դասախօսութիւնը շարժեց իմ համակրութիւնը, որև արժանի գովասանութեան. որովհետև մեր Հայոց լեզուի վարժապետների մէջ, համարձակ կասեմ, որ շատերը չգիտեն դասախօսութեան ձևերը. այլ լաւ գիտեն բռնութեամբ իշխել խեղճ աշակերտաց վերայ։ Դասախօսութիւնից յետոյ, սկսեցինք նշանակած ուսանելի առարկաներից հարցանել աշակերտներից, որոնցից ստացանք գեղեցիկ պատասխաններ. նախանձելի յառաջադիմութիւն կտեսնուէր աշակերտաց մէջ. որով յայտնապէս երևում էր վարժապետի անխոնջ ջանքը։—Իսկ Ռուսաց լեզուի մէջ, թոյլ էին գտանվում, վարժապետաց ամենամիս փոխուելու պատճառաւ։

Հարկաւոր եմ համարում նշանակել այս տեղ ուսանելի առարկայքը։

Հայոց լեզու

1. Ընթերցանութիւն թարգմ. ի գրաբարէ յաշխարհաբար
2. Քերականութիւն
3. Կրօնագիտութիւն
4. Ազգային Պատմութիւն
5. Սրբազան պատմութիւն
6. Եկեղեցական արարողութիւն
7. Վայելչագրութիւն

Ռուսաց լեզու

1. Ընթերցանութիւնն թարգմանութեամբ
2. Թուաբանութիւն
3. Բաղադրութիւն
4. Վայելչագրութիւն։

Երդարև բարեշնորհ Տէր Պողոս Հայրն էսկզբնապատճառ Դպրոցաց արժանընտիր ժողովրդոց նիւթական օգնութեամբ և նորա հսկողութեամբն է պահպանուում, և որը ձրիաբար վարում է տեսչութիւնը արժանապէս։ Գովասանութեան արժանի են և Պ. Հոգաբարձուքը։

Փոքր ինչ հանդստութիւնն առնելէն ետքը յիշեալ վարժապետի մօտ, գնացինք Օրիորդաց Դպրոցն. ուր գտանվում էին 24ի չափ ուսանող օրիորդներ։ Այս տեղ ևս քանի մի բաներ հարցրեցինք իրենց ուսանելիքներից, այն է—Կրօնականերից, Հ. Պատմութիւնից և լեզուագիտութիւնից, որոց մէջ բաւականաչափ յառաջադիմութիւն նշմարեցինք. մանաւանդ նորանց մաքուր քերականութեամբ կարդալները, ու գեղեցիկ և վայելուչ ձեռագործութիւնները։ Վերջապէս սոցա այսպէս յառաջադիմութեանն շաւղի մէջ մտնելը, յիշատակութեան արժանի են կացուցանում, բազմավաստակ մայրապետ Տիկին Մարգարիտ Տէր Յովասափեանցին և համեստափայլ ուսուցչուհի Տիկին Սիրիդուխտ Մ. Մարկոսեանին, որ անոնցան վարձով կուսուցանեն կրթութիւնը և ձեռագործութիւնը. նա ևս վերոյիշեալ Բ. Տէր Յովհաննեսեանցին՝ որ կպարապէ միւս առարկաներով։

Օրիորդաց ուսանելիք.

1. Ընթերցանութիւն թարգմ. ի գրաբարէ յաշխարհաբար. 2. Կրօնագիտութիւն. 3. Ազգային պատմութիւն. 4. Լեզուագիտութիւն. 5. Ձեռագործութիւն. 6. Երգ. 7. Վայել ադրութիւն։

Վերջ ամենայնի նուիրելով մեր սրտի խորին շնորհակալութեան յարգանքը Պ. Բ. Տէր Յովհաննեսեանցին և վարժապետուհեացն դարձայ տեղս։

Այս միայն ասելով, որ Նորգայ բարեսիրտ ժողովրդոց այժմեան ուսումնասիրական եռանդը արդէն իսկ ցոյց է տալիս իրենց ապագայի յոյսեր։

Ուստի Նորգայ ժողովրդոց կխնդրենք, որ իրենց ուսումնարանները հաստատ և ֆիմնաւոր պահեն, ամեն ուսումնական միջոցները և պիտոյքները հոգալով։ Ի վերջոյ չեմ կարող չյիշել այս տեղ և բարեկան Պողոս Աւագ քահանայի ճշմարիտ մարդկութիւնը, եռանդը և մեր ուղղափառ կրօնի սիրով վառուած հոգին, որ թողած իւր անձնական շահը պարապած է միայն Նորգայ ուսումնարանաց վերայ։ Ներեցուած տայ, որ այդպիսի քահանաներ շատ լինին մեր ազգի մէջ։

Մինաս Մինասեան։

1871 թվականի Մայիսի 22ին
Ի Քրիստոն

Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍՆ Ի ՍԻՎԱՆ.

Ի 24-ն ամսոյս յաւուր Հինգշաբաթուջ Ս. Կաթողիկոսն ամենայն Հայոց առտուանց մեկնեցաւ աստի ի Ս. Էջմիածնէ, և գիշերն անցուցանելով Մերեան, յաջորդ օրը (ի 25-ն) ընդ երեկս հասաւ ի Ս. Վանան Կէվանու, ուր պէտք է մնայ առ ժամանակ մի յօդափոխութեան։